Հաշվետվություն

1. *Անունը, Ազգանունը*

Արայիկ Հարությունյան

2. *Զբաղեցրած պաշտոնը*

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

3. *Գործուղման վայրը և ժամկետները*

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն՝ 2019 թվականի հոկտեմբերի 7-ից 9-ը

4. *Հրավիրող կողմը*

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն

5. *Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը*)

Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանին նվիրված «Կոմիտասը և իր ժառանգությունը» եռօրյա միջազգային գիտաժողովին մասնակցելու նպատակով:

6. *Քննարկված թեմաները*

Գիտաժողովը կազմակերպվել է Գերմանիայում ՀՀ դեսպանության, Բեռլինի Հումբոլդթի և Հալեի Մարտին Լյութերի անվան համալսարանների, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի, Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության, Բեռլինի պետական գրադարանի աջակցությամբ: Գիտաժողովի բացման արարողությանը ունեցել եմ ելույթ, որին բազմաթիվ հյուրերի շարքում ներկա են եղել նաև Գերմանիայի տնտեսական զարգացման և համագործակցության դաշնային նախարարության պետքարտուղար Մարիա Ֆլախսբարթը, Բեռլինի Հումբոլտի համալսարանի փոխնախագահ, պրոֆեսոր Լյուդվիգ Քրոնթհալերը:

Միջազգային համաժողովի մասնակիցներն այցելել են նաև այն ֆակուլտետ, որտեղ սովորել է Կոմիտասը, ծաղկեպսակ են դրել նրա հուշատախտակին՝ հարգանքի տուրք մատուցելով Վարպետի հիշատակին:

Գերմանիայում Կոմիտասի 150-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի շրջանակում կազմակերպված էր նաև ցուցահանդես, նրա ստեղծագործությունների ունկնդրումներ:

7. *Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները, եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները*

   ԳԴՀ բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպման ընթացքում գերմանացի գործընկերներին արդյունավետ աշխատանքի նպատակով առաջարկվել է փոխադարձ այց Հայաստան՝ համատեղ կրթական և մշակութային ծրագրեր քննարկելու նպատակով:

8. *Գործուղվողը*

   ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյան

9. *Ստորագրությունը, ամսաթիվը*

   14.11.2019

X _____